

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՈՂՋՈՒՅՆԸ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Վեհափառ Տեր,

Հանուն ամերիկահայոց թեմի Երիտասարդաց Կազմակերպության՝ 39-րդ տարեկան համաժողովն, որ տեղի ունեցավ Ուստըր, Մասաչուսեթս, օգոստոս 28, 29, 30 1985, հովանավորությամբ թեմիս առաջնորդ գերաշնորհ Թորգոմ սրբազանի, կհայտնենք բոլորիս որդիական սերն ու հավատարմությունը Ձերդ Սրբության՝ ամերիկահայ երիտասարդներու հանդեպ Ձեր ցուցաբերած հայրական վերաբերմունքին համար, ի մասնավորի Ամերիկայեն միամսյա դասընթացներու* առթիվ: Ի սրտե կմաղթենք և խոնարհաբար կաղոթենք Ձեր արևշատության և առողջության համար, և անսասանության համար մեր հավատքի կեդրոն Սուրբ Էջմիածնի:

ՍՔՈԹ ՆԱՃԱՐՅԱՆ
Ատենապետ

ՀԱԿՈԲ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Վարիչ-քարտուղար

3 սեպտեմբերի 1985 թ.

---

* Խոսքն այն մասին է, որ ամեն տարի, Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ, ամերիկահայ երիտասարդներից կազմված մի խումբ այցի է գալիս Մայր Աթոռ՝ հայերենագիտական դասընթացի հետևելու համար: